ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՍԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ **ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/25** ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ EAUCTION.ARMEPS.AM ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մարտունի 20.11.2026թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Անդամներ՝ Հ. Ղազարյան
Թ. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Սիմոնյան

1. **«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

1.1 «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2026 թվականի նոյեմբերի 17-ը՝ ժամը 14:30-ն: Հայտերը բացվել են 2026 թվականի նոյեմբերի 17-ին ժամը 14:30-ին էլեկտրոնային աճուրդի https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2026 թվականի նոյեմբերի 18-ին:

1.2 Հրավերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ չեն ստացվել:

1.3 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ. փոստ, հեռ. համար
1	«ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ	ՀՀ, Արարատի մարզ, գ. Ազատավան, Թումանյան փ., տ. 32/1	muradxanyanlernik73@gmail.com 095150677
2	«Քիչ Քիչ» ՍՊԸ	դցցմիվ (այդպես է նշված հայտում)	manuch2018@mail.ru 44567865432

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/25 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները՝

Չափաբաժնի համար	Հբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին		Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ ԱՁ	90000000 AMD	90000000 AMD	72737875 AMD	20%	87285450.00 AMD	
	2	Քիչ Քիչ ՍՊԸ	90000000 AMD	89985000 AMD	73487750 AMD	20%	88185300.00 AMD	

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

Մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- «ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ-ի հայտում բացակայում է հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով պահանջվող հայտի ապահովումը (կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով):

- «ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ-ի դիմում-հայտարարությամբ նշված բանկային հաշվեհամարը (111111111111111111) գոյություն չունեցող հաշվեհամար է:

- «ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ-ի հայտով ներկայացված Հավելված 1-ը (դիմում-հայտարարությունը) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- «ՄԱՐԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ-ն հայտով առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանում», «ապրանքային նշան» և «արտադրողի անվանում» դաշտերում նշել է միայն «տավարի միս, փափուկ», այսինքն՝ ապրանքի անվանումը, մինչդեռ անհրաժեշտ է հրավերի պահանջներին համապատասխան հստակ նշել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

3. Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/25 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, հետևյալ հասցեում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունու համայնքապետարան, Շահումյան 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները՝

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Քոչարյան

Անդամներ՝ _____ Թ.Դավթյան

_____ Հ. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան